600.0014.10.04.01

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ապրիլի 2001 թվականի №14
ք. Երևան

ԵՐԿԴՐՈՒՅՔ ՍԱԿԱԳՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ և ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2000 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի №31 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի «դ» կետը, 17-րդ հոդվածի «է») կետը և ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի 2000 թվականի դեկտեմբերի 29-ի №31 որոշումը, Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հաստատել երկդրույք սակագնային համակարգում էլեկտրաէներգիայի՝ արտադրող-մեծածախ գնորդ-վաճառող պայմանագրերի օրինակելի ձևը (կցվում է):
2. ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի 2000 թվականի դեկտեմբերի 29-ի №31 որոշման 1.1-1.6 կետերում նշված արտադրող ընկերություններին և «Հայէներգո» ՓԲԸ-ին՝ մինչև 2001 թվականի մայիսի 1-ը վերակնքել էլեկտրաէներգիայի առուվաճառքի պայմանագրերը՝ համապատաս-խանեցնելով սույն որոշմամբ հաստատված ձևին, և ներկայացնել ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի գրանցմանը:
3. ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի 2000 թվականի դեկտեմբերի 29-ի №31 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

   ա) 3-րդ կետում «2001 թվականի փետրվարի 1-ից մինչև 2001 թվականի մարտի 31-ն» բառերը փոխարինել «2001 թվականի փետրվարի 1-ից մինչև 2001 թվականի ապրիլի 30-ն», իսկ «իսկ 2001 թվականի ապրիլի 1-ից» բառերը փոխարինել «իսկ 2001 թվականի մայիսի 1-ից» բառերով:

բ) 4-րդ կետում «2001 թվականի փետրվարի 1-ից մինչև 2001 թվականի մարտի 31-ն» բառերը փոխարինել «2001 թվականի փետրվարի 1-ից մինչև 2001 թվականի ապրիլի 30-ն», իսկ «իսկ 2001 թվականի ապրիլի 1-ից՝» բառերը փոխարինել «իսկ 2001 թվականի մայիսի 1-ից՝» բառերով:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Վ. ՄՈՎՍԵՍՅԱՆ**